



Խմբագրական

ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՒԱՐՁԻՆ



26 տարիներ առաջ, 21 Սեպտեմբեր 1991-ին՝ հայրենի ժողովուրդը հանրաքուեով կ'արտայայտեր ազատ ու անկախ ապրելու իր հաւաքական կամքը եւ կեանքի կը կոչուէր Հայաստանի Գ. Հանրապետութիւնը: Անկախութիւն՝ որուն նուաճումը արդիւնքն էր գերազանցօրէն Արցախի ազգային ազատագրութեան համար մղուող պայքարի այն հրեղէն ոգիին, որուն ժայթքումը կը բողբալառէր ամբողջ հայաշխարհը, Արցախէն մինչեւ Երեւանի Ազատութեան հրապարակ, ընդհուպ մինչեւ Սփիւռքի չորս ծագերը, հոն ուր կայ հայօրէն բաբախող հայ սիրտ, հայօրէն շնչող հայ հոգի...

Մեր ժողովուրդի դարաւոր պայքարին ու երագին դափնեպսակն է Հայաստանի անկախութիւնն ու ազատութիւնը, որուն ձեռքբերման համար անհամար սերունդներ պայքարած են, զոհելով իրենց ամենէն թանկը, քանզի ազգային անկախ պետականութիւնը ժողովուրդի մը համար քաղաքական-քաղաքակրթական գերագոյն արժէք է, որ կը հնարաւորէ որ ազգը ունենայ իր լիիրաւ ու լիարժէք տեղն ու դերը համամարդկային պատմութեան եւ քաղաքակրթութեան մէջ՝ սեփական ճակատագրի տնօրինումով, սեփական ինքնութեան՝ լեզուի, մշակոյթի, հաւատքի, հոգեմտաւոր արժէքներու եւ աւանդութեանց կենսունակ պահպանումով եւ զարգացումով, ազգային անկախ ինքնազփտակցութեան ու կամքի դրսեւորումով, ազգային գաղափարախօսութեան իրագործումով...եւ կարենայ իր առաքելութիւնը իրագործել, իր ըսելիքը ըսել աշխարհին:

Այսօր անկախ Հայաստանի Հանրապետութիւնը 26 տարեկան է՝ Արցախեան ազատամարտին տարած յաղթանակով, հայոց բանակի կայացումով, Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէկ լիիրաւ անդամը ըլլալու հանգամանքով եւ այլ ստորոգելիներով: Ազգային արդար հպարտութեան կողքին, սակայն, մեր սրտերուն ուրախութիւնը անխառն չէ, քանի դեռ կը շարունակուին արտագաղթի արիւնահոսութիւնը, ընկերային եւ տնտեսական անարդարութիւններն ու բեւեռացումը, փտածութիւնն ու օրինախախտ ոտնձգութիւնները, ընդդիմադիր տարրերու եւ քաղաքական բանտարկեալներու հանդէպ ի գործ դրուած անտեղի հալածանքները: Տակաւին, երբ ֆինանսական միջազգային կեդրոններ կը կառավարեն մեր երկրի տնտեսական համակարգը՝ իրենց վարկերով ու նպաստներով, փոխարէնը թելադրելով իրենց խաղի կանոնները, պատանդ վերցնելով շատ անգամ ազգային մեր ինքնութեան էատարրերը, խոցելի դարձնելով անկախութեան լիարժէք հասկացողութիւնն ու կենսագործումը...: Եւ կը թուի թէ մեր երկիրը դեռեւս երկար ճամբայ ունի կտրելիք հասնելու համար մեր դարերով երագած ու մտատեսած անկախութեան...



Մեզ ազգովին կը մտահոգեն, յատկապէս, Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող բանակցութիւնները, գաղտնի թէ բացայայտ, ազգային Ծրագրի կամ Գաղափարախօսութեան բացակայութիւնը, ինչ որ հիմքերու հիմքը ըլլալու է պետական քաղաքականութեան, առանց երբեւէ մոռնալու որ «Յայաստանի Հանրապետութիւնը մեկնակետ է, ազատագրուած Արցախը՝ հանգրուան եւ բռնագրաւուած Հայաստանի վերադարձը հայ ժողովուրդին՝ նպատակ»։ Բանաձեւում որ ունի հողահաւաքի եւ ազգահաւաքի լայն իմաստ եւ տարողութիւն։

Աշխարհաքաղաքական բարդ եւ յարափոփոխ իրադրութեանց ներկայ ժամանակաշրջանին, յատկապէս, մեր երկիրը եւ մեր ժողովուրդը կանգնած են լրջագոյն մարտահրաւերներու դէմ յանդիման, երբ կայ տարածաշրջանի քարտէսներու վերաձեւման, բազմաբեւեռ աշխարհակարգի մը ձեւաւորման, Արեւմուտքի հզօրութեան համար Թուրքիոյ վերապահուած դերի նուազեցման ընթացքըՄեր խորին հաւատքն է որ Հայաստան եւ Սփիւռք՝ փոխադարձաբար իրարու զօրավիգ ու զօրակից ըլլալով, մենք պիտի կարենանք լուծել մեր առջեւ ծառայած մարտահրաւերները։ Այս ուղղութեամբ այ, հրամայական եւ անյետաձգելի գերիւնդի է Սփիւռքի վերակազմակերպումն ու միաւորումը՝ ներկայացուցչական կեդրոնական միակ լիազօր կառոյցի մը ներքոյ, որուն ձայնը լսելի, վստահելի եւ յարգելի ըլլայ համայն սփիւռքին կամ սփիւռքներուն, ինչպէս նաեւ մեր հանրապետութեան եւ աշխարհին ընդհանրապէս։ Զանգի միայն սփիւռքակերտ Սփիւռքը կրնայ դառնալ իսկապէս Հայաստանակերտը, աջակից եւ լծակից Մայր հայրենիքին, ինչպէս նաեւ հետամուտ ըլլալ հայ Ղատի հետապնդման աշխատանքներուն, արդիւնաւետ կերպով։ Հայաստան-Սփիւռք կապերու ծրագրուած ամրապնդումով, մենք պիտի ըլլանք ազգ-բանակ՝ մեր բոլոր կարելիութիւններու հաւաքագրմամբ, համակարգումով եւ գերագոյն արդիւնաւորումով....

Այսօր եւ ընդմիշտ, միայն Մայր Հայրենիքի հողն է իրականը եւ յատկապէս, հոն է որ կը կերտուի հայոց պատմութիւնը Արարատի յաւերժական հովանիին տակ....: Որքան դիպուկ եւ իմաստալից կը հնչեն Վազգէն Շուշանեանի անմահական խօսքերը. «Ոչինչ անելի թանկագին է երկրի վրայ, քան հայրենի հողը....Կ'անցնին բոլոր փոթորիկներն ու բոլոր ահազնադողորդ պատերազմները, կ'անցնին բոլոր հորդաներն ու բոլոր բարբարոսները, կ'անցնին բոլոր հերետիկոսներն ու բոլոր պզտիկ պարոնները՝ իրենց սուտ իմաստութեամբ, Հայոց Ազգ, քայլերդ դուրս մի՛ նետեր այս անանդակներէն, այս ծործորներէն ու այս խոպան հողերէն....Աւելի լաւ է սողալ այստեղ՝ քան թէ գլուխ ցցել ուրիշին սահմաններուն վրայ։ Ո՛չ մէկ նոր ելք այլեւս այս հողերէն։ Ճակատագիրդ հոս է եւ սրբութիւնդ հոս, վասնզի հոսկէ է միայն, որ վաղը բոլոր փառքերը կրնան արթննալ եւ բոլոր ցորենները բարձրանալ, գեղուղէշ, բոլոր ակօսներէն...»:

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնին բարեբաստիկ առիթով, կը խոնարհիինք անոր կերտումին համար իրենց կեանքը զոհաբերած բոլոր ազգայիններու յիշատակին առջեւ, նմանապէս՝ բոլոր անոնց, որոնք իրենց քրտնաջան աշխատանքը կը նուիրեն հայրենակերտումի սրբազան գործին, որոնք իրենց արիւնով կը պաշտպանեն հայրենեաց հողը, որոնք իրենց սիրով, գիտակցութեամբ ու յանձնառութեամբ կ'ապրին ու կը



շնչեն յանուն Հայաստանի ու հայութեան աւելի լաւ գալիքին համար: Սրտագին զգացումներով կ'ողջունենք հայրենի ժողովուրդն ու պետականութիւնը, մաղթելով որ անսասան մնայ մեր սիրելի հայրենիքը, հզօրանայ ան ժողովրդագրականօրէն, տնտեսապէս, ռազմականօրէն, հոգեմտաւոր արժէքներու եւ ազգային գաղափարախօսութեան ամրակուռ հիմքին վրայ, դառնալով ողջ հայութեան պարծանքը, փառքն ու պատիւը:

Շնորհաւոր տօնդ, Հայաստան եւ հայութիւն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Յօդուածներ

300-ամեակ Մխիթար արքայազոր Ս. Ղազար մուտքին – 1

ԵՐԱԽՏԻՔ՝ ՄՆԻԹԱՐԻՆ ՈՒ ԱՆՈՐ ԺԱՌԱՆԳՈՂՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ԼԵԻՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ



Գրադարանս էի ու գիրք մը փոխ պիտի առնէի:

Ճիշդ այդ պահուն պատանուի մը ներս մտաւ ու ակներել վարանումով մը հարցուց գրադարանավարին.

- Ինձի յարմար ի՞նչ գիրք ունիք...:

Գրադարանավարը պահ մը վարանեցաւ ի՞նք եւս, անմիջական պատասխան մը չկրցաւ տայ: Յետոյ հարցուց թէ քանի՞երորդ դասարանի աշակերտուի էր դիմացինը: Պարզուեցաւ որ աղջնակը միջնակարգի Ը. դասարանէն էր, հագիւ 13-14 տարեկան: Ես, որպէսզի

շուտով փարատեմ առկայ վարանումը եւ օգտակար դառնամ երկուքին ալ, միջամտեցի երկխօսութեան ու թելադրեցի, որ գիրքի ընտրութիւնը կեդրոնանայ Վենետիկ տպուած «Գրական ցուլքեր» շարքէն հատորի մը վրայ: Այդպէս ալ եղաւ: Մեր ընթերցասէր պարմանուիին հաճոյքով իր ակներու մէջ գգուեց իրեն հրամցուած Յակոբ Պարոնեանի մէկ գործը, շնորհակալութիւն յայտնեց ու դուրս ելաւ գրադարանէն...:

Ա՛հ, սա Մխիթարեան վարդապետները:

Աւելի քան 300 տարուան իրենց գործունէութեան ընթացքին որքան առատ ոսկի ու արծաթ նետեցին մեր մշակոյթի Յաւերժական Գանձանակին մէջ: Գրական, բանասիրական, պատմագրական, լեզուական, հոգեւոր, բարոյախօսական եւ այլ բնոյթի հազարաւոր գիրքերը, որոնք լոյսին եկան Վենետիկի ու Վիեննայի Մխիթարեան տպարաններէն, որքան պատկառելի ու գունագեղ դարձուցին մեր գրադարանները, որքան լոյս սփռեցին իրերայաջորդ հայ սերունդներու քալած ճամբաներուն վրայ...: «Գրական ցուլքեր» շարքը, զորօրինակ, վենետիկեան Մխիթարեան հայրերու թերեւս ամենավերջին գրական հանրամատչելի հրատարակութիւնն էր: Սքանչելի՛ նախաձեռնութիւն: Հայ դասական գրողներու գործերը ծանօթացնող փոքրածաւալ գիրքերու շարք մըն էր ասիկա, ընդհանրապէս 120-140 էջանի, որ յատկապէս թիրախ ունէր սփիւռքածին պատանիներն ու ուսանողները: Այս սիրուն գիրքերը կը տպուէին Ս. Ղազարու տպարանը ու կը ցրուուէին աշխարհով մէկ, գաղութէ-գաղութ: Կ'ենթադրեմ, որ շարքին Ա. հատորը 70-ական թուականներու վերջերը լոյս տեսած ըլլալու էր: Տարդ քանի՞ գիրք տպուած է այս շարքէն, ճշգրտօրէն չեմ գիտեր: Սակայն կ'ենթադրեմ որ այդ թիւը ապահովաբար կրնայ մօտեցած ըլլալ յիսունի: Իմ տեսածներուն թուականները կ'երկարին մինչեւ 1998: Շարքին մէջ կը գտնէք Դանիէլ Վարուժանն ու Սիամանթօս, Ա. Իսահակեանն ու Չարենցը, Ռ. Չարդարեանն ու Թէքէեանը, Ահարոնեանն ու Գր. Չօհրապը, Չարիճեանն ու Թլկատիսցին,



Պարոնեանը, Սրուանձտեանցն ու Կոստան Չարեանը, Ծառուկեանն ու Եղուարդ Պոյաճեանը եւ այլն, եւ այլն: Բայց միայն ասո՞նք: 30-40 տարի առաջուան Մխիթարեան ի՞նչ սիրուն հրատարակութիւններ դեռ իրենց հմայքին տակ կը պահեն զիս: Կրնա՞մ մոռնալ Յ. Յակոբ Չանթայեանի պատրաստած «Նոր Սեւան» ընթերցարաններու շարքը, կրնա՞մ կարօտով չիշել իմ պատանեկան տարիները՝ երբ ձեռքէս վար չէի թողուր Յ. Վահան Յովհաննէսեանի «Հայոց պատմութիւն» շարքին գունաւոր հատորները, կրնա՞մ մոռնալ այն կրօնաշունչ ու բարոյական դասերը՝ զորս կը ստանայի Յ. Աւետիք Թալաթիսեանի «Գիսաւոր աստղեր» հատորաշարքէն ու յատկապէս «Ճաղիկի պէս հմայիչ» գիրքէն, կամ այն արտասովոր հաճոյքը՝ զոր կը զգայի, երբ կը թերթատէի «Հայ ընտանիք» գունազարդ պարբերաթերթը...: Բոլորն ալ՝ Մխիթարեաններու օրինեալ ձեռքին պտուղները:

Ամէն Հայ գիտէ, որ Իտալիոյ Վենետիկ քաղաքին հանդիպակաց կղզիներէն մին կը կոչուի Ս. ՂԱՉԱՐ, ու անկէկա հայկական կղզի մըն է: Հայ մշակոյթի բոցավառ օճախ մը: Մխիթարեան Միաբանութեան կեդրոնը կամ մայրավանքը հո՞ն է: Ընթացիկ տարին՝ 2017-ն, նշանակալից թուական մըն է միաբանութեան համար, որովհետեւ ճիշդ երեք դար անցած պիտի ըլլայ այն պատմական թուականին վրայէն՝ երբ Մխիթարեան վարդապետներ, իրենց զուլին ունենալով Մխիթար Սեբաստացի աբբահայրը, ոտք դրին Ս. Ղազարի վրայ եւ պաշտօնապէս ստացան անոր սեփականատիրութիւնը: Ուրեմն, 1717–2017, 300 տարուան ժառանգ մը կուտակուած է այնտեղ, Ադրիականի խաղաղ ջուրերուն վերեւ...: Եթէ նկատի ունենանք միաբանութեան պատմութեան միայն առաջին 175 տարիները, այսինքն՝ 1700-ականներէն մինչեւ 1870-ական թուականները, կրնանք թուել շուրջ 75 վանականներու անուններ, որոնք զբաղած են գիր-գրականութեամբ, եղած են գիրի նուիրեալ սպասարկուներ: Ասիկա մեծ թիւ մըն է. ու այս թիւին գրական արտադրութիւնը եւս մեծօրի է ու որակաւոր: Միաբանութեան հիմնադիրը՝ Մեծն Մխիթար, անկասկած որ մեր մտաւոր զարթօնքի յառաջապահ դէմքերէն մին էր: Անոր բացած ակօսը եղաւ շատ խոր ու պտղալի: Իր կազմած միաբանութեան մայր առաքելութիւնն ալ եղաւ ու մնաց միշտ ԳԻՐՆ ու ՄՇԱԿՈՅԹԸ: Մխիթարեան վարդապետները, յետագային եւս, հետեւելով իրենց հիմնադրին օրինակին, առհասարակ հեռու կեցան զուտ հոգեւոր գործունեութենէ, ու ատոր փոխարէն՝ դարձան գիրի ու գիրքի մշակ, կրթական գործիչ, լեզուի պահակ, մշակոյթի ջահակիր, զեղարուեստի տարածիչ: Մխիթարի ու իր միաբանութեան շնորհիւ մեր իմացական բոլոր զանձերը յարութիւն առին հրաշապատում եւ դիւցազնական փառքերով: Եթէ պարտաւորուինք մատնանշել այն քանի մը հայ երեւելի դէմքերը, որոնք իրենց կնիքը դրին ժԸ. դարու առաջին կիսու մեր պատմութեան էջերուն վրայ, ապա անպայման պիտի յիշենք Իսրայէլ Օրին՝ իր քաղաքական-դիւանագիտական բանակցութիւններով, Դաւիթ բէկը՝ իր ռազմական շարժումներով, Բաղիշեցի Կոլոտ պատրիարքը՝ Պոլսոյ մէջ յառաջացուցած իր գրական-կրթական զարթօնքով ու Մխիթար Սեբաստացին՝ իր հիմնած միաբանութեամբ եւ հերկ ու բերքով: Բայց Մխիթարի կատարած գործը, ի բաղդատութիւն միւսներուն, եղաւ հիմնարար ու հեռագնաց: Մխիթար մտաւոր ու մշակութային յեղաշրջում մը, եղափոխութիւն մը յառաջացուց հայ կեանքին մէջ: Ի՞նչ էր իր կէտ նպատակը.- Չօրացնել Հայուն թմրած ոգին, վերակենդանացնել ու մշակել մեր գունաթափ եւ խեղճացած լեզուն, ուսուցանել ու աւանդել մեր հնօրեայ պատմութիւնը, լոյս եւ ուսում սփռել ամէնուրեք, մանաւանդ որակեալ սերունդներ հասցնել, որպէսզի անոնք գիտակցօրէն վարեն իրենց կեանքը, նեցուկ կանգնին Հայաստանին՝ անոր փրկութեան համար բացուած պայքարը



յառաջ տանելով հաւատքով, գիտութեամբ ու ինքնավստահութեամբ: Պահ մը, ձեր երեւակայութեան մէջ, ջնջեցէք Մխիթարեան միաբանութիւնն ու իր երախտաւորները Յայոց պատմութեան էջերէն...: Անեացուցէք զանոնք: Ի՞նչ կը մնայ ԺԸ.-ԺԹ. դարերու հորիզոնին վրայ: Վանականի իր համեստ տարագին տակ՝ Մխիթար մեծ յեղափոխական մըն էր: Փարոս մը: Լ.Շ.


sharoyanlevon@gmail.com

Յալէպ



Տեսակէտ

ՄՓԻՌՔ(ՆԵՐ)Ի ՈՐՊԷՍ ԱԶԳԻ ՀԱՏՈՒԱԾԻ ԻՐԱԻՈՒԹԵԱՄԲ ՏԵԻԵԼՈՒ ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ



Մինչեւ այն ատեն որ հայրենահանուածներու գաղթականութիւն էին Հայաստան(ներ)էն բրտուպեամբ հեռացուած եւ տարբեր երկիրներու մէջ ապրող հայերը, որպէս ազգի հատուածի իրաւութեամբ կը տեսէին: Միշտ նկատի պէտք է ունենայ, որ անոնք ժամանակաւոր կը համարէին իրենց կացութիւնը, կը յուսային, որ կարճատեւ

պիտի ըլլար հաւաքական պանդխտութիւնը, եւ պիտի վերադառնային իրենց քաղաքները եւ գիւղերը, պատմութիւնը պիտի վերագտնէր իր հունը:

Ազգի հայրենահանուած հատուած էին գաղթականները, իրենց լեզուով, բարբերով, հայրենատէրի բնական զգացումներով եւ գիտակցութեամբ: Հայախօս եւ թրքախօս, հայ էին, իրենց զաւակները բնական կերպով հիւղաւաններու խեղճուկ դպրոցները կը դրկէին, երբ յաջողած էին զանոնք ստեղծել, ուր կրթական ծրագիրը հայկական էր, տեղական կամ օտար լեզուն կը սորվեցնէին առանց անոր առաջնահերթութիւն տալու, քանի որ պիտի վերադառնային: Վերադարձը նախապայմաններ չունէր: Երկիր պիտի վերադառնային, առանց այլ դրախտներ երազելու, կ'ուզէին վերագտնել ինչ որ իրենց պատկանած էր, իրենց ժառանգութիւնը:

Սփիւռքի ժամանակաւոր չըլլալու գործնապաշտութիւնը սկիզբ առաւ երբ ՄԵԾ դաշնակիցները չարագեցին ՓՈԲԸ դաշնակիցին տրուած իրենց խոստումը: Վատութեամբ հրաժարեցան արդարութիւն բանաձեւած եւ 1920-ին ստորագրուած Սեւրի դաշնագրէն, եւ այսօր անոնց հետ կը խաղանք ցեղասպանութիւն ճանչնալ-չճանչնալու տեղ չհասնելու նուագով: Այդ ՄԵԾերը, երկու տարի ետք, այդ արդարութեան թուղջը փոխարինեցին Լոզանի դաշնագրով, ուր Հայկական Հարց եւ Վուտրօ Ուիլսոնի գծած Հայաստանի սահմանները չկային այլեւս, այլ «փոքրամասնութիւններ»ու իրաւունքներու մասին ջնարակող յօդուածներ, անտեսելով ազգային իրաւունքները եւ արդարութիւնը: Ապա, երբ Միացեալ Նահանգները ճանչցան Խորհրդային Միութիւնը, որուն հետեւանքով անկախ Հայաստանի վերականգնումը կը դադրէր միջազգային յարաբերութիւններու օրակարգ ըլլալէ, գաղթականները համոզուեցան, որ ժամանակաւորը երկարատեւ պիտի ըլլար:

Ինչ որ ժամանակաւոր կը թուէր ըլլալ, տարիներու գումարման հետ, մնայունի բնոյթ ստացաւ: Գաղթականները իրենց ապաստան գտած երկիրներու կեանքին կը պատշաճէին, կը ստեղծէին տնտեսութիւն, կ'աշխատէին, կը դառնային «քաղաքացի» կամ «հպատակ», հետզհետէ մերուելով նոր միջավայրի կենցաղին, բարքերուն, լեզուին, մշակոյթին, աստիճանաբար նաեւ՝ քաղաքական կեանքին: Հիւրընկալը պիտի չհայանար: Հայն էր որ այլ բան պիտի դառնար: Հայուն ինքնութիւնը պիտի տկարանար քանի կը շեշտուէր մերուելու ընթացքը, քանի տարտղնումի հետեւանքով կը դադրէր համախումբ կեանքը: Ֆիզիքական-աշխարհագրական հեռաւորութիւնները կը յառաջացնէին հոգեբանական,



քաղաքակրթական եւ մշակութային հեռաւորութիւններ, տեղական նոր պատկանելիութիւնը կը կատարուէր ի հեճոնկս ծագման եւ արմատներու:

Ժամանակաւորը սովորական մնայուն դարձած է:

Որպէս ազգի իրաւ հատուած տեսելու համար լծակներ էին եկեղեցին, դպրոցները եւ կազմակերպութիւնները (կուսակցութիւններ, միութիւններ՝ բարեսիրական, հայրենակացական, մշակութային, մարզական), որոնք տոկալու եւ տեսելու քաղաքականութեան կը հետեւէին, միշտ պահելով վերադարձի յոյսը, որ տարիներու թաւալման հետ կը տօգունէր, նահանջ՝ որ կը շեշտուէր սերունդներու փոփոխութեան հետ, տեղ մը աւելի արագ, այլ տեղ աւելի դանդաղ, կը ստեղծուէր «ծագումով հայ»ու տիպարը: Սփիւռքներու պարկեշտ հայը (խօսքը չի վերաբերիր ընդհանրապէս անհատին եւ անոր պարկեշտութեան) ինքնիրեն հարց պէտք է տայ, թէ ի՞նչ են իր առնչութիւնները եւ շարունակութիւնը հայրենահանուածներու առաջին սերունդի ազգային պատկանելիութեան եւ հայրենատիրական գիտակցութեան հետ:

Աւելի պարզ. ժամանակակից սփիւռք(ներ)ը որքանով հայ ազգի շարունակութիւն ըլլալու կը յաւակնի, իր համրանքի տոկոսային հաշիւով եւ խորքային խտութեամբ: Հարցման երկու թելերուն մասին պէտք է մտածել, գնահատում ընել, առանց ճառային խուսանաւումներու: Երբեմն պէտք է մտածել պատմական հայեցակետով: Իսլամացած հայկական զանգուածներ եղած են եւ կան: Այլ երկիրներու մէջ ձուլուած եւ անհետ կորսուած հայկական զանգուածներ կան, կան նաեւ դէպի այդ անյայտութեան ճամբուն վրայ գտնուողներ:

Ի՞նչ է պատկերը յետհայրենահանման կազմուած հայկական «գաղութ»ներու, որոնք համամոլորակային տարտղնում ունին, տարտղնում՝ որ կը շարունակուի դէպի տարբեր հորիզոններ, ինչպէ՛ս գնահատել տոկոսը շրջապատին մէջ անվերադարձ անյայտացածներու եւ անոնց որոնք տակաւին ազգային նկարագիր եւ յանձնառութիւն կը պահեն, հրաժարելով յաջողածներու «ծագման» մը յիշատակութեամբ մարդորսութիւն ընելէ եւ սնապարծութիւն մշակելէ:

Հարկ է կրկնել, որ ոչ մէկ ընկերաբանական (sociologique) իսկական գիտական ուսումնասիրութիւն գոյութիւն ունի, թիւերով ճշդումներ ընելու համար, անկախաբար ենթակայական եւ զգացական դատումներէ: Տեւաբար կը խօսինք «հայու ինքնութեան» մասին ընդհանրապէս, կը խօսինք «հայեցի կրթութեան» մասին, կը խօսինք հայ կուսակցութիւններու եւ անոնցմով յատկանշուող «յանձնառութեան» մասին: Սփիւռք(ներ)ի տեսական համրանքի ո՞ր տոկոսին համար են անոնք: Օրինակ, երբ կը խօսինք հայկական վարժարաններու եւ հայեցի կրթութեան մասին, դպրոցական տարիքի հայածնունդ սերունդի ո՞ր տոկոսը կը գտնուի հայ դպրոցի մէջ, ո՞ր տոկոսը հայերէն կը խօսի, կը կարդայ, իր ժողովուրդի պատմութիւնը գիտէ, կարենալ իրաւութեամբ տեսելու համար, քայլ մը անդին անցնելով մեծ մայրիկի կիրակնօրեայ խոհանոցէն, «սիրուած երգիչ»ներու աղմուկէն եւ «հայրենասիրական «տուրիզմ»էն:

Ինչպէ՛ս կարելի պիտի ըլլայ ճշդել հայ ժողովուրդի համրանքի ազգային դիմագիծի որակը, ո՞ր գիծէն անդին այդ կէսին ո՞ր տոկոսը լայն ըմբռնումով ազգային համայնքէն դուրս կը մնայ, տասը, քսան քառասուն տարի վերջ ի՞նչ պիտի ըլլայ այդ տոկոսը: Միամիտ պէտք չէ ըլլալ: Տեստական եւ մշակութային հզօր թափով համաշխարհայնացման ընթացքին մէջ,



սփիւռք(ներ)ը որպէս ազգի իրաւութեամբ ապրող հատուած ինչպէ՛ս պիտի տեսէ եւ մինչեւ երբ:

Ինչպէ՛ս այս ազգի անելի քան կէսը հայու իրաւութեամբ պիտի տեսէ: Դպրոցները, եկեղեցին, կուսակցութիւնները եւ բոլոր միւս կառոյցները ինչպէ՛ս պիտի պահեն ազգի այս անելի քան կէսը: Բոլոր նախաձեռնութիւնները կրնա՞ն ժամանակաւորէ անելի տարբեր ըլլալ:

Ճշմարտութեան պահու մը, հայրենի պետութեան եւ սփիւռք(ներ)ի ղեկավարութիւնները ապագայատես վերաբեւում պետք է ունենան այս խնդիրն սկստմամբ, անհանգստանալու եւ անհանգստացնելու գնով:

Որպէս եզրակացութիւն հարցում մը. զանգուածային հայրենադարձութենէ տարբեր ճանապարհ կա՞յ: Հանդիսութիւններու եւ ամպագոռոռ խորհրդաժողովներու ընթացքին ինչո՞ւ չենք յանդգնիր այս խնդիրը օրակարգ դարձնել:

Ինչո՞ւ չենք համարձակիր ըսել, որ անհատապաշտութիւնը չենք յաջողիր հաշտեցնել ազգային ինքնութեան, իրաւունքի եւ հայրենատիրութեան հետ: Իրաւ եւ հարազատ ղեկավարութիւնը պետք է դատել այս խնդիրն բերած լուծումով, որ չըլլայ բառերու մարզանք, ամբոխ քնացող ճակատում դիրքապաշտութեան սահմաններուն վրայ:

Պետք է գիտնալ մերժել սփիւռք(ներ)ի ժամանակաւորէն մնայուն անցումը, ունենալով բարօրութեան անմիջականի գերանցումով ազգի ինքնութեան եւ ամբողջութեան վերականգնումը որպէս նպատակ, գիտնալով որ ազգը կ'ապրի իր հողով եւ մշակոյթով միաժամանակ:

Այս միտքերը եւ անոնց հետեւող նախաձեռնութիւնները իմաստ կ'ունենան, եթէ ազգի ճակատագրի առաջնորդութիւնը գործէ ըստ վախճանական նպատակի (finalité):

Հարց պետք է տալ, թէ ինչո՞ւ հզօր սփիւռք պետք է պահել կամ ինչո՞ւ հայեցի կրթութիւն տալ սփիւռքածին հայաճնունդներուն, ի՞նչ է վախճանական նպատակը այդ առաջադրանքներուն, երբ գիտենք, որ ինչպէս կ'ըսուի՝ երկար ժամանակի վրայ, անոնք տեսարար պիտի նահանջեն, հուսկ շիջելու համար:

Ազգային տեսանկիւնէ պատասխանը մէկ պետք է ըլլար եւ ըլլայ մեկին. հայրենադարձութիւն: Հզօր սփիւռք պետք է պահել վերադարձի համար: Հայեցի դաստիարակութեան առանցքին պետք է գտնուի նոյն այդ վերադարձի փիլիսոփայութիւնը, որ կ'իմաստաւորէ հայերէնի, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի ուսուցումը: Հաց-պանիրի հայերէն մը (յիշէ՛լ Շաւարշ Միսաքեանը) եւ հետաքրքրաշարժի մանրութիւնը բաւարարող մշակոյթը ազգային գոյատեւման ոչ խորք կու տան ոչ ալ ապագայ, զուրկ ըլլալով հեռանկարէ, քանի որ կը խեղդուին յուշերու, տեղականի եւ տեղայնականի ինքնագոհութեան եւ փառասիրութիւններուն մէջ:

Ազգի գոյութիւնը եւ ապագան այսօր կը կերտուին: Պետք է գիտնալ ազգի ապագան եւ համայնքային թափահարումները չշփոթել:

Կրկնե՞նք՝ վաղը միշտ ուշ է:

Յակոբ Պալեան



Կիպրահայ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ՃԳՆԱԻՈՐԵԱՆԻ ԲԱՑԱՌԻԿ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ



Կիպրոս հիմնուած եւ քանի մը տասնեակ տարիներէ ի վեր գործող Pharos Arts Foundation-ը, հիմնադիր՝ կիպրահայ մշակութասէր, մշակութապահպան եւ մշակութանուէր Կարօ Թեհէեան, անշահութաբեր մշակութային-կրթական կազմակերպութիւն մըն է, նուիրուած արուեստներու քաջալերման ու տարածման վսեմ առաքելութեան: Ան կանոնաւոր հերթականութեամբ կը կազմակերպէ մշակութային եւ կրթական ծրագիրներ, որոնք կը ցուցաբերեն զօրաւոր յանձնառութիւն մը՝ գեղարուեստական գերազանցութեան եւ ստեղծագործական ընթացքի: Զիմարկը ցարդ Կիպրոս հրաւիրած է աշխարհահռչակ եւ տաղանդաւոր, հայ թէ օտար արուեստագետներ՝ աշխարհի չորս ծագերէն, իր կարելոր ներդրումը բերելով արուեստներու ճաշակի ձեւաւորման Կիպրոսի հանրութեան մօտ:

Գեղարուեստական ձեռնարկներու գլխաւոր վայրը կը հանդիսանայ հին Նիկոսիոյ մէջ գտնուող The Shoe Factory-ն, որ՝ ինչպէս անունը կը թելադրէ, եղած է կօշիկի գործարան մը, նորոգուած, բարեգարդուած, ինքնուրոյն ոճով գեղարուեստական հանդիսավայրի վերածուած, շնորհիւ անոր սեփականատէր՝ Կարօ Թեհէեանի հնարամտութեան եւ բարձր ճաշակին:

The Pharos Arts Foundation-ի մշակութային-գեղարուեստական գործունեութեանց ծիրէն ներս, տեղի ունեցաւ ջութակի մենահամերգը Էմմանուէլ Ճգնաւորեանի՝ Ուրբաթ 15 Սեպտեմբեր 2017-ին, երեկոյեան ժամը 8: 30-ին, Shoe Factory-ի սրահին մէջ, ի ներկայութեան հայ, տեղացի եւ օտար երաժշտասէր հասարակութեան մը:

Էմմանուէլ Ճգնաւորեան ծնած է Վիեննա 1995-ին եւ մեծցած է երաժիշտներու ընտանիքի մը մէջ: Ան իր ջութակի դասերուն սկսած է հինգ տարեկանին եւ իր առաջին ելոյթը ունեցած է եօթը տարեկանին: Ցարդ արժանացած է բազում մրցանակներու՝ միջազգային մրցոյթներուն, հանդէս եկած է որպէս մենակատարը Վիեննայի սիմֆօնիք նուագախումբին, Թոսքանայի նուագախումբին, ֆիննական, Պոսթոնի, Զելսինքիի, Միւնիխի տարբեր նուագախումբերուն մէջ: Ներկայիս, ան ընտրուած է մասնակցելու 2017-2018 ժամանակաշրջանին կատարուելիք Եւրոպական Concert Hall Organisation—ի Բարձրացող Աստղեր համերգաշարին...

Էմմանուէլ Ճգնաւորեանի ջութակը՝ 1698-ի Անթոնիօ Սթրատիվարի իւրայատուկ ջութակ մըն է :

Զիմարկի հիմնադիր եւ նախագահ Կարօ Թեհէեան՝ իր բարի գալուատի խօսքին մէջ, շեշտեց որ ներկաներուն եւ Կիպրոսի համար մեծ պատիւ եւ առանձնաշնորհում մըն էր այն փաստը, որ միջազգային համբաւի տիրացած, տաղանդաւոր երաժիշտը իր վերոնշեալ համերգաշարը կը սկսէր Կիպրոսէն եւ ջերմօրէն ողջունեց Էմմանուէլ Ճգնաւորեանը եւ ներկաները այս առիթով:



Էմմանուէլ Ճզնաւորեան, համերգի առաջին իսկ վայրկեանէն, մագնիսացուց իր ունկնդիրները՝ բարձր հմտութեամբ եւ նրբանուրբ յուզականութեամբ կատարելով յաջորդաբար J.S. Bach-ի Sonata in G minor, BWV 1001, Eugene Ysaye-ի Violin Sonata No. 1 in G minor, Op. 27, No 1, այնուհետեւ՝ կարճ դադարէ մը ետք՝ Sergei Prokofiev-ի, George Enescu-ի, Christoph Ehrenfellner-ի եւ Heinrich Wilhelm Ernst-ի երկերէն, արժանանալով գեղարուեստասէր հասարակութեան ջերմաջերմ ընդունելութեան, երկարատեւ ծափողջոյններով արտայայտուած:

Ջութակի այս սքանչելի մենահամերգը, մենակատարողութեամբ Էմմանուէլ Ճզնաւորեանի, որ բառիս բուն իմաստով խօսեցուց իր ջութակը, անոր լարերուն թրթիռը անցնելով իր սրտի լարերէն, անչափ հմտօրէն, անչափ յուզաթաթա՛ւ, լուսաթրթի՛ռ, նրբաթրթի՛ռ...վստահաբար դեռ երկար կ'ապրի ներկաներուն սրտերուն մէջ...մասնաւորաբար իր վերջին (յայտագրէն դուրս) մատուցումը՝ «Կռունկ»ի մենանուագը, դարձաւ՝ գոնէ հայ ունկնդիրներուն համար, բարձրակետը համերգին.... որուն առթած սրտայոյզ ապրումները արցունք բերին աչքերուն....

Կեցցե՛ս, տաղանդաւոր ու հանճարեղ ջութակահար, որ 22 տարեկան վաղ հասակիդ, արդէն նուաճեր ես միջազգային համբաւ...եւ այդ համբաւիդ կենսագործման ճանապարհին վրայ՝ բարձր եւ արժանավայել կերպով կը հնչեցնես նաեւ հայ հոգիի ձայնն ու մեղեդին...: Նորանոր յաջողութեանց բարձունքներ քեզ, սիրելի Էմմանուէլ Ճզնաւորեան:

Վարձքը կատար՝ համերգի կազմակերպիչ եւ նախաձեռնող, մշակոյթի եւ արուեստներու անխոնջ գործիչ, Կարօ Զեհեւեանին եւ իր գլխաւորած Pharos Arts Foundation Յիմնարկին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Հաւատալ մարդուն, ինչ ալ պատահի, քանզի իւրաքանչիւր մարդ Էակին մէջ կ'այ այն Աստուածային կայծը, զոր տեսնել է պետք, զոր բռնկեցնել է պետք, զոր վառել է պետք....Պիտի փնտռել ու գտնել այն խորքային ԵՍ-ը, որ կայ թաքնուած առօրեայ բիւր մանրուքներու ետին, այն ԵՍ-ը որ քօղարկուած կը մնայ սին

պատրանքներու ու խաբկանքներու, տուայտանքներու ու տագնապներու խորքը....Եւ կրնայ յանկարծօրէն բոցկլտալ ինքնաճանաչման եւ ճշմարտութեան լոյսով....: Մեզմէ իւրաքանչիւրը թերեւս կրնայ մարդ Էակին մէջ յայտնաբերել անոր ամենէն դրական գիծերը, կամ հակառակը.....: Մեր վերաբերմունքէն, մեր հայեացքէն ու կեցուածքէն.... շատ բան է կախեալ....

.....

Մարդ կայ մոմի վտիտ լոյսով կրնայ ուրախանալ, մարդ ալ կայ որ լոյսերու ճառագայթին մէջ Նստած, կը տրտնջայ լոյսի պակասէն...Լոյսը պիտի մարդ ունենայ իր հոգւոյն մէջ, գերազանցօրէն, որպէսզի կարենայ գնահատել եւ արժեւորել կեանքի այն ամենէն փոքր Նշոյլները լոյսի, որ կը մատուցուին ամեն մարդ Էակի....սակայն, աւա՛ղ, սակաւ են անոնք որ սորված են լոյսի այդ թելուզ աննշան ճաճանչով լուսաւորուի, այնպէս ինչպէս ուրախութիւն զգալ կեանքի ամենէն աննշան թուացող երեւոյթներու մէջ....

.....

Ճշմարտութեան զգացումը....Մարդ Էակին մէջ կը թուի թէ կ'այ ճշմարտութեան զգացումը ի բնէ, տեսակ մը յայտնատեսական ներքին բնագոյ մը կարծեք..., որով կը զգայ անմիջապէս լսուած խօսքին ճշմարիտը կամ կեղծը եւ կ'ունենայ համապատասխան հակազդեցութիւն ալ...: Ճշմարիտը կը դպչի սրտին, մտքին, մինչ սուտն ու կեղծը վանողական կ'ըլլան ներքուստ. ոչ մէկ արձագանգ կը թողուն մեր ներաշխարհէն ներս, որքան ալ անոնք շպարուած ըլլան գեղեցիկ խօսքերով, պերճաբանութեամբ....: Մարդ Էակը շատ աւելի խորունկ ու առեղծուածային է, քան ա՛յն, ինչ որ մենք կը պատկերացնենք....Ան իսկապէս ալ Աստուածային կայծ մը կը կրէ իր մէջ...

.....

Մարդկային նկարագիրն է որ իւրաքանչիւրիս համար կը բնորոշէ մեր բուն, իսկական արժեքը...Կրնաս նոյնիսկ հանճար մը ըլլալ, մասնագիտական եւ այլ կարողութիւններով օժտուած, բայց եթէ նկարագիրէ զուրկ ես, յայնժամ շատ բան կը պակսի քու արժեքքդ....Իսկ նկարագիրը՝ ճշմարտախօսութիւն է, ճշմարիտին յանձնառու ըլլալ է, կեցուածք ցուցաբերել է, գէշ ըլլալու գնով արդարը պաշտպանել է...սկզբուքային ըլլալ է....Եւ նման առաքինութիւններ....

.....



Մարդուն ներաշխարհը ալեկոծող գաղափար-ապրումները, որքան ալ ցաւատանջ ըլլան, կը պայմանաւորեն անոր մարդկային Էութիւնը...

.....

Մեծ անհատականութիւններու ժամանակը շատոնց անցած կը թուի ըլլալ...«Արեւմտեան դեմոկրատիա» եզրոյթով բնորոշուող իրականութիւնը ներկայիս դարձեր է Էսպէս «Պիզնետ»ի մտածողութեամբ եւ հոգեբանութեամբ կառավարուող կարգ ու սարք...ուր տիրական են նիւթապաշտութիւնը, շահամոլութիւնը եւ սպառողական քաղաքակրթութեան յատուկ «արժէք»ներու համակարգ մը: Այդ համակարգէն ներս, մեծութիւններ դժուար թէ աճին ու իրենց արժանի տեղը գտնեն հասարակութեան մէջ: Միևնույն ժամանակներ, զորս կարելի է գնել ու վաճառել, կը բուսնին սունկի նման եւ կը գրաւեն հրապարակը ամենուր: Ներկայ դրուածքին մէջ, ամեն մարդ կարծես իր գինը ունի...եւ կը կատարէ գնորդին պատուէրը...Մարդը կ'ապրանքայնանայ եւ կը կորսնցնէ իր բուն արարչաստեղծ արժէքը:

.....

Մեծամտութիւնը ահարկու է...միշտ իրենը ճիշդ համարող, ամեն ինչ գիտնալ յաւակնող, ինքզինք ուրիշէն աւելի մտացի կարծող եւ այսպէս շարունակ...Մեծամտութիւնը ոչ միայն վանողական եւ խրտչեցնող է, այլեւ կը սահմանափակէ տուեալ ենթակային մտահորիզոնը, կը կղզիացնէ անոր միտքը...եւ ինքնախաբեութեան պատրանքով կ'օրօրէ զայն...Մեծամտութիւնը գուցէ մեծագոյն տգիտութիւնն է, որ կը փակէ ենթակային իմացութիւնը նորանոր գաղափարներու առջեւ....

.....

Միայն ճշմարտութիւնը կրնայ մեզ ազատագրել , որպէս մարդ-անհատ ու հասարակութիւն...բայց մամուլը, լրատուամիջոցները ամեն ինչ կ'ընեն կարծէք թաքցնելու համար բուն ճշմարտութիւնը եւ մատուցելու՝ կիսաճշմարտութիւններ , որոնք բացայայտ սուտի մէկ այլ տեսակն են, եւ գուցէ՝ աւելի վտանգաւոր, քանզի ճշմարտութեան տեսքով կը ներկայանան անոնք հանրութեան....

.....

Մտածելու մեր ծովութիւնը եւ անկախ դատելու յանդգնութեան պակասը հաւանաբար պատճառ են եղած որ ուրիշին հրամցուցած գաղափարները հալած իւրի տեղ ընդունինք, կուրօրէն կրկնելով զանոնք, կուրօրէն պանծացնելով զանոնք, կուրօրէն հաւատալով անոնց..., առանց զանոնք անցնելու մեր մտածման, կշռադատման, խորունկ գիտացութեան բովէն...Այսպէս է որ մենք տակաւ ստրկացած ենք եւ դեռ կը ստրկանանք այլոց գերիշխանութեան, որ ունի քաղաքական, տնտեսական, աշխարհայեացքային, արժէքային կողմեր ու յատկանիշներ...Անկախութեան սկզբնակետը անկախ կարենալ մտածելուն մէջ է...

.....

Ոչ մէկ սրբութիւն կը մնայ աշխարհիս երեսին, եթէ ամեն ինչ շուկայի վերածուի, եթէ ամեն ինչ վաճառքի ապրանք դառնայ....Ողբալի է երբ հայրենիքը կը վաճառուի մաս առ մաս, երբ



Եկեղեցին շուկայ կը դառնայ, երբ հայ դպրոցը գրպանային մտածողութեամբ կը կառավարուի, երբեմն կը փակուի ալ Նոյն պատճառով...Առանց սրբութեան, չկայ ազգ, չկայ հայրենիք....

.....

Որեւէ պետութեան հիմքն ու հենքը բարոյականութիւնն է, առանց որուն փուլ կու գայ ան՝ վաղ թէ ուշ: Բարոյական արժեքներու վրայ ամօրեւ խարսխուած պետութիւնը կրնայ դիմակայել ներքին թէ արտաքին դժուարութիւնները, Նոյնիսկ՝ ահռելի թշնամին, քանզի ներքին հզօրութեամբ է ամրապինդ: Միւս կողմէ, անբարոյական դրուածքով պետութիւնը չի կրնար Նուաճել իր քաղաքացիներու ներքին միութիւնն ու վստահութիւնը եւ՝ առաջին իսկ ցնցումին դէմյանդիման, կը քայքայուի, կը փլուզուի ան, հոգ չէ թէ՝ ունենայ զօրաւոր բանակ, ուժեղ տնտեսութիւն եւ այլ հնարաւորութիւններ...."Virtus" լատինական բառը կը նշանակէ «առաքինութիւն» կամ «բարոյական արիութիւն»...որ հիմքերու հիմքն է անհատին թէ պետութեան կայացումին, որուն կրողը պիտի ըլլան պետական այրերն ու հասարակութեան անդամները՝ քաղաքացիները....Այլապէս՝ մենք կ'ունենանք խարխուլ պետութիւն եւ հասարակութիւն....

.....

Չարժեքներու տօնահանդես....Հրապարակը դիտումնաւոր կարծեք կը ողողեն այնպիսի չարժեքներով, որ մատղաշ սերունդին միտքը բթանայ, ճաշակը պղծուի, հոգին այլասերուի....Արդի երաժշտութիւն կոչուածը, մեծաւ մասամբ, ժամանակակից արուեստի նմուշներ եւ Նորարականին տակ թաքնուած տեսակ-տեսակ խորթութիւններ «Ֆաւթ ֆուտ»ի նման կը կլանեն մթնոլորտը, տեղ չձգելով իսկապէս գեղեցիկին, արժեքաւորին, որոնք Նոյնիսկ կրնան արհամարհուիլ եւ հնացած համարուիլ....Ո՞ր կ'երթայ աշխարհը այսպէս....

.....

Չեմ սիրեր չափուած-ձեւուած կեանքը, որ կորսնցուցած է իր բնականութիւնը, իր բոյրն ու թոյրը...որ դարձած է արհեստական, մեքենայական, օգտապաշտական, շահադիտական....Մարդ Էակին ունեցած կապը բնութեան հետ Էական է, կենսական՝ մարդ մնալու, ներքին ներդաշնակութիւնը պահելու համար....Մեքենայ-մարդը կը սարսափեցնէ զիս....

.....

Այնքան դիւրին է ճառել հայրենասիրութենէ , սակայն դժուար՝ հայրենասէր ըլլալը, այնքան դիւրին՝ խօսիլ արդարութեան եւ ճշմարտութեան մասին, բայց դժուար՝ արդար եւ ճշմարտախօս ըլլալը....Այնքան դիւրին՝ բարբաջել առաքինութեան մասին, սակայն դժուար՝ առաքինի ըլլալը....: Ձեւով ու ձեւականութեամբ փայլող մեր ներկայ աշխարհին մէջ, ըլլալն է դժուար...Մինչ այնքան շատ է թուացեալը, երեւոյթը....Յաճախ ալ, ունենալը կը ծածկէ ըլլալու Էականութիւնը:

.....



Իւրաքանչիւր հայ անհատ հայոց պատմութիւն է...իր նախնեաց հետ կապուած ինչ-որ յուշի ու յիշողութեան շտեմարան...դպրոցական գրասեղաններէն իր մէջ ներծծուած ցեղասպանութեան արհաւիրք, վերապրելու կամք, հայ մալու եւ հայ ապրելու աննկուն կորով, աննահանջ ոգի, որոնց չի կրնար դաւաճանել ան երբե՛ք...քանզի դաւաճանողը կը մնայ առանց ինքնութեան եւ արժանապատուութեան...Սա հայու ճակատագիր է...

.....

Հայրենասիրութիւնը... ո՛չ շրթուքի մարզանք է ան, ո՛չ ալ սիրախաղ...Հայրենասիրութիւնը ներքին Էութիւն է, առանց որուն կեանքը կը զրկուի իր առանցքէն, իր բուն իմաստէն...Աշխարհ կու գանք հայրենիքով ապրելու, անով լեցուելու, անոր ներքին Էութեան վրայ մեր սիրտէն ու հոգիէն նշոյլ մը լոյս կաթելու...քար մը դնելու անոր ոգեղէն կառոյցին, անոր շաղախելու ցօղը մեր քրտիներին, մեր արցունքին, մեր արիւնին... Սրբազնագոյն այն վայրին, ուր կը պառկին մեր մեռելները՝ իրենց մշտակենդան ոգիով...ուր կ'ապրի, կը շնչէ ու կը ծաղկի հայ հոգին, առանց որուն մենք կը դառնանք խլեակներ միայն, առանց ինքնութեան, առանց դիմագիծի, այսինքն ողորմելի արարածներ...Հայրենասիրութիւնը կարելի չէ սահմանել բառերով ու խօսքերով...ան կը մնայ անըմբռնելի, անտարագելի, որպէս արեան կանչ, արեան ձայն, ներքին մղում, ներքին Էութիւն...եւ դեռ աւելին...:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Գրական-Մշակութային

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱՂՕԹՔԸ

Աղօթքը պահ է սրբութեան

Երկիւղած խոր, մեծ լռութեան

Խիղճիդ հետ լուռ անբառ զրոյցի

Խոստովանանք մ'անեղծ ու ջինջ...

Աղօթքը՝ պահ հաղորդութեան

Գերագոյնին որ զգաստանաս

Ճանչնաս ինքզինքդ մեծ Գոյին մէջ

Աղերսանք է յղուած առ Տէրն...

Աղօթքը՝ խոր հոգեզմայլանք

Տիեզերական ներդաշնութեան

Անոր մէն մի տարրին առջեւ

Սքանչացման պահ է հոգեհեւ..

Աղօթքը՝ յոյս ու լոյս վաղուան

Խորունկ հաւատք վառ գալիքի

Բիւր իղձերու կատարման հրաշք

Երազներու հոգետեսիլ...

Աղօթքը՝ սեր տիեզերական

Մարդ էակին, անշունչ իրին

Լայն աշխարհին հետ նոյնանալ

Տրոփն զգալ է տիեզերքին...



Յոգիին մէջ համայնն զգալ

Ընդարձակիլ անպարագիծ

Պարագրկել մարդն ու աշխարհն

Յիւլէին մէջ մեծ ու չնչին...Ե.Գ.

.....

ԱՂՕԹՔԻ ՊԷՍ..

Լուսաճառագ, լուսաշառայլ արշալոյսներ

Լոյսով օժէ՞ք մարդկանց սիրտերն արեգնատենչ

Լո՛յս հեղեղէք դուք ամէն տեղ եւ ամէնուր

Խուժէ՞ք նոյնիսկ մթին խորշերն հոգիներու

Լոյս-բարութիւն տարածեցէք գեղածիծաղ

Սիրտերուն մէջ բիւր-բիւր մարդկանց դուք յոգնասպառ

Սիրատոչոր, սիրածարաւ սիրտերուն վառ

Որք կը սպասեն սիրալոյսին միշտ տենդավառ...

Լոյսը սեր է, բարութիւն է եօթնածիածան

Որ կամարէ սիրտերն իրար կամարակապ

Չարն ու մուրը կը հեռանան հալածական

Բարի լոյսը, սերը տիրեն արեգնափայլ...Ե.Գ.

.....

ՍԻՐՏ ԻՍ

Սի՛րտ իմ զգայուն, դեռ մանկունակ

Ղօղանջէ՛ յար իմ կրծքիս տակ

Չանզը եղի՛ր ճշմարտութեան

Արթնացման կանչն արդարութեան...

Քուն թէ արթուն, զարկդ յուշիկ

Չգաստ պահէ՛ ձայնը խղճիս

Աղմուկները խառնաշփոթ

Չխանգարեն կանչդ աղուոր...



Թէ մոլորիմ ու սայթաքիմ
Ուղիներուն վրայ կեանքիս
Խարազանէ՛ տազնապահար
Վերադառնամ գերթ անառակն...
Միտք եմ ածեր ես շարունակ
Բայց առանց քեզ, սուր միտքն անգամ
Կը կարկամի շփոթահար
Անուղեցոյց ան կը մնայ...
Դուն ես, սիրտ իմ, աննինջ պահակն
Յոգւոյն վճիտ, արարչական
Որ ան շողայ ճաճանջափայլ
Իր նախաստեղծ պայծառութեամբ...Ե.Գ.

.....

ՏԷՐ....

Տէ՛ր, լոյս կաթէ իմ սրտին մէջ
Թող ան սիրով բոցավառի
Յոյսերով նոր թող առկայծի
Յաւատքն իր մէջ մնայ անշէջ...

Տէ՛ր, լոյս կաթէ իմ մտքին մէջ
Թող նոր խոհեր գայն այցելեն
Չբորբոսի ան մզլտած
Այլ յարաշարժ թող խլրտայ...

Տէ՛ր, լոյս կաթէ համակ անձիս
Իմաստութեանդ լոյսը վարար
Որ պարունակն իմ փո՛քը անչափ
Շողարձակէ լոյսդ անքնին...



Լոյսիդ մատչի՛մ խոնարհաբար

Լոյսդ ըմպե՛մ յար անյագուրդ

Լուսողողուի՛մ պայծառացեալ

Լուսաբաշխուի՛մ լուսխորհուրդ...Ե.Գ

.....

ՄԵՐԹ ԱՅՍ ԵՄ, ՄԵՐԹ ԱՅՆ...

Իմ մէջ կայ գարնան աւիշը խելառ,

Որ կրնայ սարսել ծառը ծերացած,

Նոր ընծիւղներ տալ թարմ, գեղադալար,

Վաղուան խոստումով բարի, բերքառատ....

Իմ մէջ կայ ամրան տօթը դիւահար,

Որ կը հրկիզէ դաշտն արեւավառ,

Ամրան գոլ շունչով, տենդով արբեցած

Կու տայ լիառատ պտուղներ կենաց...

Իմ մէջ կայ աշնան թախիծ հրակարմիր,

Յուշեր ու յոյզեր, անուրջ ու հեքիաթ,

Որք կը սրսփան միալար անձրեւին

Կը դառնան կարօտ, սեր անանձնական....

Իմ մէջ կայ ձմեռն խիստ, հողմահառաչ,

Մրրիկ, փոթորիկ, անձրեւ յորդառատ

Ձիւնի փաթիլներ օրհնութեան նման,

Մաքուր, բիւրեղեայ, աղօթքի նման....



Մերթ ա՛յս եմ, մերթ ա՛յն, յար փոփոխական,
Իմ մէջ եմ պահած գաղտնիքը կենաց,
Եղանակներուն պէս ամէն տարուան,
Գիտեմ ես մեռնիլ, վերագարթնուլ յար: Ե.Գ.

.....

ՄՈՒՍԱՍ ՀՈԳԻՍ Է ՃԱՌԱԳԱՅԹԵԱԼ

Օրհնեալ պահ է աստուածատուր
Երբ մուսաս գայ յանկարծօրէն
Ալեկոծեալ խոհ-յոյզերուս
Յուշէ բառեր լուսահեղեղ...

Երկնատուր պահ է լուսափառ
Երբ բառերս ուլունք-ուլունք
Դառնան մանեակ մարգարտաշար
Ու պսպղան բարեգարդուն...

Քո՛ւն թէ արթո՛ւն ես կ'որոնեմ
Մուսայաբեր պահն այդ օրհնեալ
Հրաշահիլսե՛մ գոհար տողեր
Բառերով վեհ, լուսածորան...

Բայց մուսաս ալ իր քմայքն ունի
Մերթ կ'երեւի ան լուսափայլ
Մերթ կ'անհետի, որ կարօտովն իր
Հոգիս այրի, բոցավառի
Ճրագ դառնայ հրաշափայլ
Երկնէ տողեր հրաշածին...



Մուսաս հոգիս է ճառագայթեալ... Ե.Գ.

.....

ԺԱՄԱՆԱԿԸ...

Ժամանակը շատ բան տարաւ

Կենսահիւթէս արեւաւառ

Պաղ ալիքներ խառնեց կրակիս

Բոցավառող տենչերուս հին..

Ո՞ւր է հիմա խելառ աղջնակն

Վարսերով բորբ եւ հուրհրան

Կենսաժպիտ ու կենախինդ

Պարմանուհին այն հրածին....

Ու թէ հեղ մը իմաստնացայ

Գգուանքովը տարիներուս

Թէ շոյանքովն անոնց դաժան

Ես անխոհեմ խենթն եմ նոյն

Յայեացքիս վառ՝ լոյս հեռուներ

Արշալոյսներ վարդահեղեղ

Որոնք չունին դեռ մայրամուտ...

Բայց ի՞նչ ընեմ թէ ծիրանին

Վերջալուսող իմ արեւին

Կը յուշէ ինձ որ շատ շուտով

Իրիկնաժամ է ոսկելոյս....Ե.Գ.

.....

ԼՈՒՍԱՅԵՏՔԵՐ...

Լուսահետքեր ժամանակի

Ակօս դարձաք խոհի, յոյզի

Ուր հունտերս ես ցանեցի

Անշէջ յոյսովը գալիքի...



Բուռ-բուռ հատիկ սերմանեցի

Սիրոյ, գութի, կարեկցանքի

Աչքերուս մէջ արշալոյսներ

Վառ հաւատքիս միշտ աներեր...

Ոռոգեցի ակօսներն այդ

Քրտինքովս յորդահոսան

Որ հունտերս ոսկեցորեան

Խորշակահար յանկարծ չըլլան..

Ծիլ ու բողբոջ տուին անոնք

Ատոք հասկեր յետոյ դարձան

Տէր, մի թողուր որ մրրիկն չար

Արմատախիլ ընէ զանոնք

Թող բերք, բարիք դառնան անոնք

Սեղանին վրայ նօթի թշուառին

Յաց կենարար ոգետոչոր

Տառապահար մարդ էակին...Ե.Գ.

.....

ԾԱՌՍ ՊՏՂԱՏՈՒ..

Ծառս պտղատու մնա՛յ բերքառատ

Ի վայելումս շրթանց ծարաւի

Թող լոյսի շիթեր ան անձրեւէ յար

Սիրոյ կաթիլներ տոչորուն սրտին...

Ըղձանքը հոգւոյս ա՛յս է գերազանց

Թող պտղաբերումս ըլլայ դեռ երկար

Սիրգերով հիւթեղ եւ արեւահամ

Քաղցին ոգեկան դառնայ հոգեհաց

Ու դեռ սպեղանի, ցաւերու դարման

Վերքի բալասան, վիշտի սփոփարար...



Թող պտուղներս քիմքերը օծեն
Բիւր բիւրոց դառնան սրտի մանանա
Բաժակ մը գինի որմէ արբեման
Սրտի ցնծութեամբ հոգին պարուրեն...Ե.Գ.

.....

ԾՆՈՒՆԴԱ...

Ծնունդս զերթ արեւածագ
Խոստում մըն էր յանուն վաղուան
Խանձարուրիս մէջ, ՏԷ՛ր Աստուած
Դրիր հունտեր բազմատեսակ...
Ոմանք չորցան խորշակահար
Ուրիշներ կան ճամբակէսին
Ինկան տխուր ու ցրտահար
Ճակատագի՞ր մըն էր դաժան
Թէ՛ իմ սխալս էր պատճառն..
Մնացեալ հունտերը, սակայն, ՏԷ՛ր
Ծիլ ու ծաղիկ տուին շքեղ
Յետոյ դարձան հիւթեղ պտուղներ
Չանոնք այլոց ես կ'ընծայեմ...
Ի՛նչ որ տուիր ինձի, ո՛վ ՏԷ՛ր
Պիտ' ուզէի վերադարձնել...
Յունձքս քիչ է, ներէ Գթա՛ծ
Բայց սիրով է ան հասունցած...
Անոր մէջ է սիրտս համակ
Յոգիս անբաւ, ճիգս սրտանց
Յելքը շունչիս, թախիժ ու խինդ
Ոգիս որ մնաց անընկճելի...
Մայրամուտ է արդէն շուտով



Իր խոստումով ծիրանաւոր...

Ընդունէ՛, Տէր, բերքս խոնարի

Թող ան դառնայ սրտի բերկրանք

Բիւր- բիւրերուն հաց կենարար

Ցաւաց դարման ու բալասան...

Չշարտուի միայն, ո՛վ Տէր

Որպէս անպէտք մի իրեղէն

Քանզի հոգիս անցումէս ետք

Պիտի հեծէ տողերուս մէջ...Ե.Գ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Գրական-Մշակութային

Կեանքի Մէջ՝ Կը Խաղար, Բեմի Վրայ՝ Կ'ապրէր

(Անահիտ Թօփչեանի Ծննդեան 70-ամեակին Առիթով)

ՄՈՎՍԷՍ ՀԵՐԿԵԼԵԱՆ



Սիրելի ընթերցող,

Այն, ինչը թուղթին պիտի յանձնեմ քանի մը անգամ պատմած եմ տարբեր առիթներով, ընդ որում նաեւ Անահիտի եւ Ալիքի ներկայութեան, Պէյրուսի մեր տան մէջ: Կ'ենթադրեմ, որ Անահիտի ծննդեան 70ամեակը լաւագոյն առիթն է գրի առնելու մեր ծանօթացման այս տարօրինակ պատմութիւնը:

Սաստիկ ձմեռ էր, ձիւն, բուք ու բորան: Սօս Սարգսեանի գլխաւորութեամբ պիտի հաւաքուէինք Ծաղկաձորի Գրողներու միութեան հանգստատունը: Կարգադրուած էր, որ Վարուժան Խտըշեանն ու ես պիտի մեկնէինք Աղասի Այվազեանի ինքնաշարժով: Ան Նոր «Ժիկուկի» ստացած էր, իսկ իր քովը նստած Ստեփան Ալաջաջեան կոկորդի Նոր վիրահատման ենթարկուած՝ կը խօսէր մարդամեքենայի առողջանութեամբ: Վարուժանն ու ես տեղաւորուած էինք ինքնաշարժի ետեւի նստարանը: Խօսակցութիւնը կը դառնար ձմրան խստութեան եւ ներկաներու թուաքանակին շուրջ: Ընթացքին յանկարծ Այվազեան տուաւ նաեւ Անահիտ եւ Ալիք Թօփչեաններու անունները: Վարուժանը նստած տեղը շտկուեցաւ, դիրք բռնեց, ինծի դարձաւ ու արաբերէնով ըսաւ.

– Դուն լուր ունէիր, որ Անահիտը ներկայ պիտի ըլլայ:

– Ո՛չ լուր չունէի:

– Ուրեմն ինծի նայէ, այս գիշեր «ռեստորան» պիտի երթանք եւ Անահիտը իմ քովս պիտի նստի, հասկցա՞ր:

Ես գիտէի, թէ Վարուժանը իր բեմադրած Նիլ Սայմընի «Հանրային Պարտեզին Մէջ Ոտաբոյսիկ» ներկայացման մէջ, գլխաւոր դերը Անահիտին վերապահած էր, սակայն «հարկադրաբար» ուրիշի մը տուաւ... բնաւ չէի գիտեր, որ այլ հաշիւներ ու այդքան մեծ տկարութիւն ունէր Անահիտին հանդէպ: Չգացի որ այդ օր Անահիտին իր քովը նստեցնելը շատ կարեւոր էր իրեն համար: Հակառակ իր յարձակողական ոճին, հանգիստ ձայնով ըսի.

– Վարուժ, կարիք չկայ կռիւ ստեղծելու, մանաւա՛նդ որ ես հարց չունիմ: Ո՞վ չ'ուզեր, որ Անահիտը իր քովը նստի: Միտալ մի հասկնար: Այո, գեգեցիկ կին է, հմայիչ ու տաղանդաւոր, սակայն ոչ մէկ ծրագիր ունիմ քովը նստելու: Ես միայն բեմէն կը ճանչնամ զինք: Ամուսինը ընկերս է, սակայն առիթ չ'է եղած, որ ծանօթանամ իր հետ: Ո՛ր կ'ուզէ թող նստի: Ես հարց չունիմ:



– Արդէն սկսար, հոս նայիր, իր ներկայութեան դուն քեզ զուսպ եւ կիրթ կը պահես: Աւելորդ պակաս «քոմիլիմենդներ»ու կարիքը չկայ... մագերը կարճ են եղեր, երկար են քեզի չի խառնուիր:

– Չեմ հասկնար, Վարուժ, ամուսինը հետը պիտի ըլլայ ըսի, ես ծանօթ չեմ իրեն, եւ անիմաստ տեղը հետս կը սակարկես...

– Որովհետեւ այնճարցի ես, ամէն տեղ ամէն ինչ կը խօսիս, մագերէն կը սկսիս եւ ո՞ւր կը հասնիս չես գիտեր:

– Լաւ, ի՞նչ կ'ուզես որ ընեմ, արհամարհե՞մ գիւք:

– Տեսա՞ր, մէկ ծայրայեղութենէն միւսը կ'անցնիս: Դուն քեզ հանգիստ պահէ կը բաւէ:

Անահիտը իմ քովը պիտի նստի այսօր. հասկցա՞ր: Չըլլայ որ խանգարես:

Թէեւ Վարուժանին արտայայտուելու ոճը կոպիտ էր եւ տհաճ, այնուամենայնիւ լռեցի: Լռեցի, որովհետեւ երկու յարգարժան գրողներու ներկայութեան կը խօսելիք իրենց անհասկնալի լեզուով մը եւ պարբերաբար կը կրկնէիք Անահիտի անունը: Պահ մը լռութիւն տիրեց ինքնաշարժէն ներս, որ այնքան ալ հաճելի չէր: Լռութիւնը խզեց Այվազեանը.

– Ի՞նչ է Վարուժան, հաւանո՞ւմ ես Անահիտին:

– Ո՞վ չի հաւնիր «պապամ», դուն չե՞ս հաւնիր: Այս մարդն ալ (ակնարկելով ինծի) երկար մագերուն զարնուած է: Աս ի՞նչ կը հասկնայ գեղեցիկ կիներ ի՞նչ է, Անահիտը ո՞վ է: Դերասանական խաղ կայ, թատրոն կայ, արուեստ կայ: Մագերը գեղեցիկ են եղեր, երկար են եղեր, Է՞, յետոյ ի՞նչ, վերջացա՞մ...

Ես խոհեմաբար շարունակեցի լռել, իսկ զրոյցը կանգ առաւ թատրոնի վրայ, ապա անցաւ ֆիլմարուեստին ու շարունակուեցաւ գրականութեամբ: Հասանք: Մեզ առաջնորդեցին առաջին յարկի մէկ սենեակը, ուր որոշ չափով հանգստանալէ եւ կազդուրուելէ ետք, երեկոյեան դուրս ելանք ճաշարան մեկնելու: Չեմ գիտեր Վարուժանի չար բախտէն թէ իմ լաւ բախտէս նոյն ատեն քովի սենեակէն դուրս ելան Անահիտն ու Ալիքը միասին: Ոտքի վրայ ողջագուրուեցանք: Անահիտը ջերմութեամբ ընդունեց մեզ: Ալիքը զիս Անահիտին ներկայացուց բաւականին բարձր գովասանքներով: Անահիտը անմիջապէս սկսաւ հետաքրքրուելու ինձմով: Վարուժանը զայրացած դարձաւ Ալիքին ու ըսաւ.

– Գո՞րծ ըրիր հիմա: Ի՞նչ կը գովես կոր ասոր, ի՞նչ գրող... ի՞նչ արուեստ, չես տեսներ, որ մուսալեռցի է, ասոնք ականջ կտրողներ են, ուրիշ բանէ չեն հասկնար: Ալիքը նախ փորձեց առարկել, յետոյ կատակի տուաւ. իսկ Անահիտին աւելի հետքորքեց մուսալեռցիներուն ականջ կտրող ըլլալու հանգամանքը: Եւ երբ կը պատրաստուէիք մեկնելու, յանկարծ Անահիտը նշմարեց, որ վերնաշապիկիս մէկ կոճակը փրթած է, ի հեճուկս Վարուժանին, ձեռքս բռնեց ու ներս հրաւիրեց ամրացնելու: Սենեակը տաք էր, չես գիտեր ուրկէ ասեղ եւ դերձան գտաւ, վերնաշապիկս հանել տուաւ ու սկսաւ կոճակը կարելու: Դուրսը Ալիքն ու Վարուժանը կը զրուցէին, սակայն Վարուժանի ձայնը անհանգստութեան նշաններ ցոյց կու տար: Ի վերջոյ ան գոռաց.

– Ի՞նչ կ'ընէք ներսը, ժողովուրդը սոված է մեզի կը սպասէ:



Ես ձայն չհանեցի: Անահիտը պատասխանեց.

– Զիչ մը սպասեցէք, կոճակ կարելը այդքան ալ դիւրին չէ:

Կոճակ կարելու արարողութիւնը բաւական երկար տեւեց: Ալիքը ամէն ինչ բնական ընդունելով, հանգիստ կը սպասէր: Սակայն Վարուժանը տագնապի նշաններ ցոյց կու տար երբեմն բարձրաձայն կը հագար կամ ուշացած ըլլալու յիշեցումներ կը կատարէր: Ի վերջոյ, դուռը հրեց ու ներս մտաւ: Չիս առանց վերնաշապիկի տեսնելով «օ՛հօ» գոռալով այնպէս մը նայեցաւ ինծի, կարծես թէ մեծ յանցանք մը գործած էի: Դուրս ելանք: Անահիտը, Ալիքին թելը մտած՝ Գրողներու հանգստատան զառիվարէն (այն ատեն դեռեւս զառիվարի աստիճանները չէին շինուած) սառած ձիւնին վրայէն սղելով արագ հեռացան մեզմէ: Վարուժանը սկսաւ.

– Անահիտին ըսի՞ր թէ դուն երկար մազեր կը սիրես:

– Ոչ, չըսի:

– Հապա ի՞նչ խօսեցաք:

– Պարապ բաներ:

– Պարապ բանե՞ր, այո՛, պարապ բաներ: Նայի՛ր, դուն տղամարդու խօսք տուիր, որ խելօք պիտի մնաս: Վարը յանկարծ համը չհանես: Նկատի առ որ Անահիտը հաստատ քովս պիտի նստի...

Սօսն ալ լուր ունի: Յստա՞կ է ամէն ինչ:

Հակառակ անոր որ «յստակ է» ըսի ու խօսք տուի, Վարուժանը ճանապարհին նոյն բաները կրկնեց անընդհատ: Ներս մտանք ճաշարան: Բոլորը հոն էին բացի Խորէն Պալեանէն, որ գրեթէ մեր հետ հասաւ եւ ծանուցեց, թէ Լուսինէն (Չաքարեան) ներկայ պիտի չըլլայ յոգնածութեան հետեւանքով: Բոլորը դժգոհ մնացին, իսկ Վարուժանը յայտարարեց, թէ դժբախտաբար երկուքի փոխարէն միայն մէկ կին պիտի ունենանք սեղանին վրայ եւ ան ալ իր քովը պետք է որ նստի: Եւ քանի որ միակ բեմադրիչն է, ինք պիտի որոշէ, թէ ո՞վ ո՞ւր պիտի նստի:

Ներկաները համակերպութեան նշաններ ցոյց տուին, իսկ Վարուժանը անցաւ գործի: Սեղանը բաւական երկար էր: Նախ Ալիքին սեղանին գլուխը նստեցուց առանձին, ինք գրաւեց աջ կողմի կեդրոնի աթոռը, ճի՛շդ դիմացը նստեցուց Սօս Սարգսեանը, անոր ձախ կողմը՝ զիս, իսկ միւսները՝ Չօրի Բալայեանը, Ալպեր Մկրտչեանը, Խորէն Պալեանը, Ստեփան Ալաջաջեանը, Աղասի Այվազեանը եւ միւսները ցրուեց ըստ պատահականութեան, ազատ ձգելով իր երկու կողմը, այսիքն Լուսինէի եւ Անահիտի աթոռները: Սօսը նշմարելէ ետք որ Վարուժանի երկու կողմերը ազատ են, ելաւ եւ գնաց նստաւ Վարուժանի աջ կողմը, յայտարարելով, որ կ'ուզէ իր «արիւնակից» եղբօր (անոնք օր մը իրենց ձեռքի երակները վիրաւորեցին ու արիւնները իրար խառնեցին) քովը նստիլ: Այսպիսով ազատ մնացին վարուժանի ձախ կողմն ու իմ աջ կողմը: Վարուժանը զգալով վտանգը՝ անմիջապէս ըսաւ.

– Անահիտն ալ կը նստի իմ քովը:



Անահիտը, որ մինչ այդ անշարժ մնացած էր ոտքի, մէկ Վարուժին նայեցաւ մէկ ինծի, ապա ըսաւ.

– Ո՛չ, ես Մովսէսին քով կը նստիմ:

Իմ համբերատար ընթերցող, կացութիւնս բաւական բարդ էր՝ եւ ճակատագրական:

Վարուժանին նայուածքը սպառնալից, յանդիմանական ու աղաչական էր միաժամանակ: Խնդիրը լուրջ էր: Պէտք է փրկէի կացութիւնը: Խօսքիս տէրը ըլլալու համար ոտքի ելայ եւ ըսի.

– Անահիտ ջան, ներող կը լինես, իմ քովը նստիլը այնքան ալ դիւրին չէ, ես մուսաւեռցի եմ: Դուն երկար, ուղիսինահոս վարսեր ունես, որ գլխիդ վրայ հաւաքել ես հացթուփի նման: Եթէ իմ քով պիտի գաս, ապա պէտք է որ քակես մազերդ եւ ուսերուդ վրայ փռես ջրվէժի պէս...:

Անահիտը նախ նշանակալից նայեցաւ ինծի, ապա խուզարկու հայեացք մը պտըտցնելէ ետք ներկաներուն վրայ, ետ դարձաւ ու գնաց: Չարմացած ու շուարած էին բոլորը: Շուարած էի նաեւ ես, որովհետեւ չէի գիտեր ճի՞շդ ըրի թէ սխալ: Վարուժանը կարծես թէ գոհ էր ինձմէ:

Դառնալով ինծի իբրեւ թէ ցած ձայնով (թէեւ բոլորն ալ լսեցին) ըսաւ.

– Եղա՛ւ հիմա, Անահիտին պէս, «լէտի»ի մը հետ այդպէ՛ս կը վարուին:

Այս անգամ ես խիստ յանդիմանական նայուածք մը նետեցի վրան ու ինք հասկցաւ պէտք եղածը ու լռեց: Լռեցիք բոլորս: Անահիտը ուշացաւ: Ոմանք առաջարկեցին ետեւէն երթալ սակայն Ալիքը հանգստացուց եւ ըսաւ.

– Կարիք չկայ հիմա կու գայ:

Երբ արդէն ներկաները սկսած էին համակերպելու Անահիտի բացակայութեան, յանկարծ ան հեռուէն երեւցաւ: Զայուածքը թատերական էր ու սիգաճեմ: Ուղիսինահոս ծամերը փռած էր մերկ ուսերուն վրայ ու ինքնավստահ կը յառաջանար դէպի սեղանը: Հիացական բացազանչութիւններու եւ ծափողջոյններու տարափին տակ եկաւ կեցաւ դիմացս ու «պալէ» պարուհիի նման աջ ոտքի մատներուն վրայ 360 աստիճան «ֆռռաց»: Երկար վարսերը ծփացին միջոցին մէջ, բազմապատկելով անոր կանացի հմայքը ու գրաւչութիւնը: Ապա կանգ առաւ ու նայուածքը խրելով աչքերուս մէջ կարծես ըսել կ'ուզէր. «Յը՛, հիմա՛ ինչ կ'ըսես»: Ես պարտուած էի անոր շքեղ գեղեցկութեան դիմաց: Ոտքի ելայ: Նախ նայուածք մը նետեցի սեղանի երկայնքն ի վեր, հասկցնելու համար որ «պահանջս» տեղին էր եւ ապա չափազանց յարգալից կողքիս աթոռը առաջարկեցի անոր: Չէի համարձակեր Վարուժանին կողմը նայիլ: Գիտէի որ վտանգը մեծ է եւ յղի անակնկալներով: Անահիտը հագիւ նստած հին մտերիմի մը նման ականջիս փսփսաց.

– Կարմի՞ր գինի կը սիրես թէ ճերմակ:

– Ոչ մէկը եւ ոչ ալ միւսը:

Տեսնելով մեր «մտերմութիւն»ը, Վարուժանը կատղած ոտքի ելաւ: Սօսը զգալով պահի լարուածութիւնն ու կացութեան փոփոխումն փիճակը, ինք եւս ոտքի ելաւ, ձեռքը դրաւ Վարուժանի ուսերուն եւ իբրեւ վաւերական թամատա առաջարկեց խմել Անահիտի (առանց



մոռնալու Լուսինէին) կենացը: Անոր «մազերը քակելու» վարուելակերպը համարեց նուէր մը մեզ բոլորիս, յատկապէս Վարուժանին որ գիտէ գնահատել հմայիչ կիներու գեղեցկութիւնն ու տաղանդը ու ճի՛շդ կողմնորոշուիլ դերասանուհի ընտրելու պարագային:

Իմ արդարամիտ ընթերցող,

Վարուժանի եւ իմ ականայ քաջքշուքներուն մէջ՝ երկուքս ալ պարտուեցանք: Յաղթողը՝ Անահիտն էր իր գեղցկութեամբ ու կանացիութեամբ հանդերձ:

Այսպէս էր Անահիտը, կեանքին մէջ կը «խաղար», իսկ բեմին վրայ «կ'ապրէր»:

Յուլիս, 2017

Մոնթրէալ

«ԱՉԱՏ ԽՕՍՔ»ը ջերմօրէն կը շնորհաւորէ թանկագին յոբելեարը՝ տաղանդաւոր արուեստագետ, արձակագիր եւ դերասան ԱՆԱՅԻՏ ԹՕՓՉԵԱՆԸ, իրեն մաղթելով ստեղծագործական դեռ երկար եւ բեղմնաւոր, արեւաշատ տարիներ:



Գրական-Մշակութային

«Դրանք տարածքներ չեն, դա հայրենիք է. ինչպե՞ս ասեմ, որ հայրենիք յանձնելը ճիշդ է». Պերճ Զեյթունցեան



«Երկիր».- Տեղեկացրել էինք արդէն, որ երկարատեւ, ծանր հիւանդութիւնից յետոյ, կեանքից հեռացաւ արձակագիր, թատերագիր, սցենարիստ (բեմագիր-խմբ.) եւ թարգմանիչ Պերճ Զեյթունցեանը:

Ներկայացնում ենք Զեյթունցեանի մտքերը այս կամ այն խնդրի, հարցի առնչութեամբ. մտքերը վերցուած են «Ֆէյսբուք»-ում գրողի պաշտօնական էջից.

«Իմ, դժուար էլ է հաւատալը, ակելի քան 60 տարիների գրական գործունեութեան ընթացքում միշտ համոզուած եմ եղել, որ արձակագիրը ներշնչանքին պիտի չսպասի, ամէն օր գրասեղանի առջեւ նստի ու տքնի, սակայն այդպէս էլ բեղուն գրող չեմ դարձել: Դրա փոխարէն՝ չեմ կարծում, թէ այնպիսի գործ եմ գրել, որի համար ամաչեմ: Հրատարակել եմ քսան գիրք, թարգմանուել եմ աշխարհի տասնմէկ լեզուով: Տասներկու թատերգութեան հեղինակ եմ, որոնցից միայն մէկն է՝ «Ապրելն Ու Մեռնելը», որ չի բեմադրուել: Վերջերս Ֆրանսիայում արժանացայ «Արարատ» գրական մրցանակին, որը Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը պաշտօնապէս յանձնեց, ԱՄՆ-ում, «Ֆաուկթեն» թատրոնում իմ երեք թատերախաղերի հիման վրայ, անգլերէն, ընթերցողական բեմադրութիւն ներկայացուեց, Կալիֆոռնիայի պետական համալսարանի հայագիտութեան ամբիոնն ինձ Գրիգոր Նարեկացու անուան շքանշան շնորհեց: Ահա եւ իմ ապրած կեանքի համառօտ հանրագումարը»:

«Արտաքուստ ես շատ միօրինակ, միապաղաղ կեանքով եմ ապրում, այլազան զուարճանքների չեմ տրուում, մոլախաղերով չեմ տարուում: Պարզապէս խաղալ չգիտեմ, ժամանակին չեմ սովորել: Իմ թատերագրութիւնը, եթէ կարելի է այդպէս արտայայտուել, այդ խաղերին է փոխարինում, քանի որ ի վերջոյ նոյնպէս խաղ է: Անուանումս էլ է նոյնը վկայում՝ թատերախաղ. այսինքն՝ խաղ, որն ինձ զբաղեցնում է գործողութիւնների լարուածութեամբ, ներքին անակնկալներով, խարդաւանքներով, հէնց թէկուզ կառուցուածքային իւրայատկութեամբ: Ընթերցանութեան առումով էլ թատերգութիւնն ինձ համար սիրելի գրական ժանր է»:

«Մինչեւ 1988 թուականը ես հրապարակախօսութեամբ չեմ զբաղուել, մամուլում յօդուածներով հանդէս չեմ եկել:

1988ի շարժումն ինձ այլափոխեց՝ ես ամբողջ էութեամբ տարուեցի մեր ժողովրդի միասնականութեամբ, վճռականութեամբ, հաւատացի, որ պատմական իրադարձութիւնների էի մասնակցում: Դրանք, առանց չափազանցութեան, իմ կեանքի



ամենաերջանիկ օրերն էին: Ես շարժման մասնակից ամենաանաղմուկ, բայց հաւատարիմ գրողն էի, Օպերայի հրապարակում իմ մշտական, մեկուսի տեղն ունէի, ամէն երեկոյ, առանց բացառութեան, բոլոր հռետորներին ծայրեծայր լսում էի: Եթէ հանրահաւաքը շատ ուշ էր վերջանում, ոտքով էի տուն վերադառնում: Որքան մեծ էր իմ ոգեւորութիւնը, այնքան էլ դառն ու խորը եղաւ յաջորդած հիասթափութիւնը, մանաւանդ որ նիւթականը իսկոյն փոխարինեց հոգեկանին, գրական ընթերցանութիւնը մոռացուեց, մշակոյթն ընդհանրապէս անտեսուեց: Իմ հրապարակագրութիւնը ներքին այդ բախումից է ծնուել, քանի որ ինձ համար օրէնքը հասարակութեան, երկրի բարոյականութեան հիմքն է»:

«Չայկական բանակը մեր պատմական նուաճումն է, որով ամէն հայ պիտի հպարտանայ: Չպարտանում է: Երբ ես փողոցում կամ հեռուստատեսութեամբ հայկական համազգեստով, զինանշաններով զինուորներ եմ տեսնում, ներքին բերկրանքս չեմ կարողանում սքօշել ու, երեւի տարիքից է, ուրախութիւնից քիչ է մնում լաց լինեմ: Այդ պատճառով էլ ոչ մի կերպ չեմ համակերպում այն լուրերի հետ, որ մեր զօրամասերում ներքին բախումներ են պատահում: Դա իմ կարծիքով խորհրդային՝ բազմազգ բանակի տխուր ժառանգութիւնն է: Ամէն հայ նորակոչիկ համազգեստ հագնելու պահից պիտի մեկընդմիշտ հասկանայ, որ ինքը ծառայելու է իր հայրենակիցների՝ եղբայրների հետ, իսկ բոլորը միասին ծառայելու են համընդհանուր, համազգային նպատակի»:

«Չայաստանն իմ միակ հայրենիքն եմ համարում, Չայաստանից հեռու ինձ որպէս անհատ, առաւել եւս գրող չեմ պատկերացնում: Չնայած այսպէս կոչուած ձևալից յետոյ էլ եմ շատ հալածուել: Իմ «Ոտքի՛, Դատարանն է Գալիս» թատերախաղը հանրապետութեան կուսակցական ղեկավարները առանց դիտելու արգելեցին: Ես խորապէս վիրաւորուած էի ոչ այնքան իմ ստեղծագործութեան ճակատագրի, որքան այն անանձնական վրիժառուի համար, որը ցեղասպանութեան մոլագարութիւնը ջաղթահարած մեր ժողովրդին ազգային արժանապատուութիւն հաղորդեց, ում անգամ գերմանական դատարանն արդարացրեց»:

«Մարդը, ինչպէս սովորաբար ընդունուած է կարծելը, դիմակի է դիմում ոչ այնքան դիմացիկի, որքան իր համար: Նա ձգտում է այնպիսին լինել, ինչպիսին ինքն է իրեն պատկերացնում եւ ոչ այնպիսին, ինչպիսին ուզում է, որ ուրիշներն իրեն տեսնեն: Սա՛ ի միջի այլոց: Թերեւս ոչ այնքան իմիջիայլոց...»

«Չպիտի ջայլամի պէս գլուխներս խոթենք աւագի մէջ: Ես մեկուկէս միլիոն մարդու արտագաղթը մեծագոյն աղետ է Չայաստանի համար: ՄԵԿ-մԵԿ խօսում ենք, ուղղակի փնթփնթում ենք մենք: Սա պետք է դառնայ ազգային հարց: Ղարաբաղի հարցին հաւասար ազգային հարց: Ղարաբաղը որ ունենանք եւ մեկուկէս միլիոն հայ չունենանք այսօր, ի՞նչ կը ստացուի: Չի փոխհատուցւում, չէ՛: Իսկ դրա համար պետք է մտածենք, ստեղծենք այնպիսի պայմաններ, որ հայը ոչ թէ ուզենայ արտագաղթել, այլ ներգաղթել: ՄԵԿ խնդիր ունենք այսօր՝ ստեղծել բարեկեցիկ Չայաստան: Ստեղծենք մի երկիր, ուր բարոյական արգելանքներ լինեն:



Այսօր չեմ տեսնում այդ բարոյական արժեքները: Դրա վերականգնման համար ես ունեմ մի միամիտ դեղատոմս ընդամենը՝ պետք է լինի օրենքի գերակայութիւն: Եթէ դառնայ օրենքի երկիր, երբ ոչ թէ օրենքը կախուած լինի մարդուց, այլ մարդը օրենքից, այդ դեպքում օրինականութեան հիմքերը կը դրուեն: Սա մէկ:

Երկրորդ հակասութիւնը՝ մեր մշակոյթը, մեր ողջ մշակութային ժառանգութիւնը եւրոպական մակարդակ ունի, իհարկէ հիմքը ազգային է, բայց հաւասարազօր է եւրոպականին: Ինչպէս Վարուժանն է ասել. «Մեր գրականութիւնը պետք է ազգային ըլլայ, բայց անոր հիմքը պետք է համամարդկային ըլլայ»: Այդպէս էլ մեր ողջ մշակոյթը եւրոպական է: Բայց մեր կենցաղը արեւելեան է: Նայէք մեր հարսանիքները, թաղումները, կնուները, մենք մեր կենցաղով արեւելեան ենք: Բայց դրա կողքին Խաչատրեան, Սարեան, Բաբաջանեան ունենք, Կոջոյեան ունենք, որոնք կապ չունեն դրա հետ:

Ահա այս խզումը կայ: Նման խզումներ շատ կան, սրանք աստիճանաբար վերացնելու մասին նաեւ պետք է մտածենք: Պետք է նայենք նոյն ուղղութեամբ, ուր ընթանում է համաշխարհային արուեստը, օղանցքները բացել, տեսնել, թէ աշխարհում ինչ կայ եւ քո օրի մէջ բերել նաեւ այդ օղը, իհարկէ ազգայինը պահպանելով: Պատահական չէ, որ այսօր մեր պօեզիան թարգմանւում է եւ ամենից շատ Սեւակն է ընդունելութեան արժանանում դրսում: Ինչո՞ւ, որովհետեւ նա համաշխարհային գրականութեանն ընթանում է համաքայլ: Նա լուսանցքում չէ: Լուսանցքում, որ ընկնես, քեզ ոչ ոք չի հասկանայ: Այ մենք պետք է ձգտենք մնալով խիստ ազգային, հայ, բայց այնուամենայնիւ լուսանցքում չմնալ»:

«Այսպէս ասած «գրաւեալ տարածքները» ո՞րն են: Ես շատ դեմ եմ տարածքներ յանձնելուն: Դրանք տարածքներ չեն, դա հայրենիք է: Ես ինչպէ՞ս ասեմ, որ հայրենիք յանձնելը ճիշդ է: Զերիք է կորցնենք, գոնէ մի անգամ ինչ-որ բանի տեր լինենք»



ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Յոգիս նոյնն է, ան չէ փոխուեր
Պայծառափայլ, հուր ու բոց է
Տարիք-մարիք ի՞նչ կապ ունի
Երբ հոգիդ միշտ կը հուրհրատի..

.....

Յանելուկ է կեանքը համակ, պատասխաններ կը փնտռենք յար,
Ամեն մէկս իրեն համար, սակայն երբեք չենք գոհանար
Պատասխանն այդ կա՞յ թէ՞ չկայ, գուցէ կեանքին աչք չփակած
Յայտնուի ան արեւափառ, բայց արդէն ուշ, երբ մենք չկանք:

.....

Յանապազորդ հաց մը եղար
Օդի, ջուրի պէս կենսական
Գի՛ր սիրելի, քեզմով ճանչցայ
Ես զիս, մարդն, աշխարհն համակ..

.....

Մենութեանս խոր պահերուն
Մարդուն համար ես խոկացի
Խորխորատներն իջայ հոգւոյս
Իմաստութեան ծիլն քաղելու...

.....



Պատրաստ եկածը քամին կը տանի
Իսկական արժէք ալ չունենար
Չալալ քրտիկըքով ձեռքբերուածն
Կ'ըլլայ լիարժէք ճաշակելի..

.....

Անցումէս ետք այս աշխարհէն
Չեմ ուզեր ես կեղծ արցունքներ
Երբ ձեր ժպիտն անգամ զլացար
Բարի խօսք մը՝ իմ ողջութեան...

.....

Երեւնալու խեղճ մրցոյթին
Քեզ կը մոռնան միշտ կամովին
Քեզ կը յիշեն երբ որ գործ կայ
Շռայլէն խօսքեր ստապատիր...

.....

Խօսքը սրտի ակէն կ'ելլէ
Կ'արտաբերուի օրհնեալ բերնէն
Թէ որ պղծես զայն կեղծիքով
Անձդ պղծես թուք ու մուրով...

.....

Սպասումով մենք կ'ապրինք, կանք
Ո՛ր տարիքի մէջ ալ ըլլանք
Սիրտը սպասում թէ չունենայ
Կրնա՞յ տրոփել դեռ կենսավառ...

.....

Ամէն պահ մենք հրաժեշտ կու տանք
Պահին անցեալ, պահին անցնող
Որ տրտմութեան երանգ կու տայ



Ապրումներուն մեր հոգեթով...

.....

Ժամանակի անխախտ հերթով

Նորը կու գայ, հինը կ'երթայ

Յինն յուշերով միշտ բեռնաւոր

Նորն յոյսերով արեւաւառ...

.....

Ամէն սերունդ նորէն կրկնէ

Ըսուած-չըսուած խօսքը հինի

Կարծելով թէ նորովի է

Իր գտածն է լոկ հրաշալի...

.....

Մարդաշատ հաւաք ու ճոռոմ խօսքեր

Ձաղացն է գացեր, չախչախը փնտռեն

Տարագիր կեանք է, չախչախը կրնա՞յ

Ջրաղաց դառնալ եւ հաց հայթայթել...

.....

Պահը երբ գայ ճշմարտութեան

Կեղծն ու սուտը սարսափահար

Փախուստ կու տան, կը պահուըտին

Մերկ վիճակով ինչպէ՞ս յայտնուին...

.....

Մենք մահինն ենք, չկայ փախուստ

Բայց երանի այն մարդուն որ

Սերմեր ցանէ ոգիի սուրբ

Ապրի ընդմիշտ դեռ յետ-մահու...

.....

Դժուար պահեր կան, սի՛րտ իմ, դիմացիր



Երբ սիրտն ու միտքը կ'ըլլան կռուի մէջ

Բայց սրտի ձայնը ինչպէ՞ս անտեսել

Երբ կը գորգոռայ խորունկ ցաւի մէջ...

.....

Մահու կենաց սահմանին վրայ

Դիմակները կը պատռուին

Դեմք, դիմագիծ պարզ կը դառնան

Յոգին կ'ըլլայ մերկ ու մեկին...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ